ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<07>> հուլիս 2025թ. N ՄՈ 647-Ա

ք. Արմավիր

«ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ԳԵՎՈՐԳ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Լուսինե Գասպարյանի 2025 թվականի հուլիսի 4-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Գասպարյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի հուլիսի 7-ից օգոստոսի 8-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Լուսինե Գասպարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ազատուհի Ադամյանին:
3. «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ազատուհի Ադամյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հուլիսի 7-ից օգոստոսի 8-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Լուսինե Գասպարյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 11-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ

2025-07-07 16:56:06 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ